

ԲԱՅԸ ԵՎ ՆՐԱ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԴԸ
ԶԱՔԱՐԻԱ ԱԳՈՒԼԵՑՈՒ «ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

Վ. Հ. ԿԱԺՅԱՆ

Աշխարհաբարի գրավոր հուշարձանները XVII դարի երկրորդ կեսից են հանդիպում: Այդ շրջանի սակավաթիվ հուշարձաններից է Զաքարիա Աղուլեցու «Օրագրությունը»¹: Վաճառականի ձեռքով գրված այս «ղավտարը» վաղ աշխարհաբարի ուսումնասիրության կարևոր և արժեքավոր աղբյուր է: Հայ լեզվաբանները (Գր. Վանցյան, Հր. Աճառյան, Ա. Ղարիբյան, Գ. Մեակ, Հ. Կուսիկյան, Ս. Ղաղարյան, Գ. Զահուկյան, է. Թումանյան և այլք) արժեքավորել են երկի լեզուն, ուսումնասիրել լեզվական առանձին երևույթներ:

Աղուլեցուն բնորոշ է լեզվական նույն երևույթը բազմազան ձևերով արտահայտելը: Ըսկ գրաբարի, միջին հայերենի, բարբառների և աշխարհաբարի ձևերի ղուգահեռ գործածությունը վաղ աշխարհաբարի յուրահատկությունն է: Այս տեսակետից մեծ հետաքրքրություն կարող է ունենալ բայի և նրա խոնարհման համակարգի ուսումնասիրությունը, քանի որ Գր. Վանցյանը², Ս. Ղաղարյանը³, Ալ. Մարգարյանը⁴ և մյուսներն ունեն միայն մասնակի դիտողություններ «Օրագրության» մեջ բայի առանձին հարցերի վերաբերյալ:

Բայական բառույթը «Օրագրությունում» կաղմված է համադրական և վերլուծական եղանակով⁵: Բայական խոսքի մասն ալելի բազմերանգ ու բազմազան է արտահայտվել բայական հարադրությունների շնորհիվ, որոնք ձևավորված են տարբեր բայերով. ման ածէն (153), բան անեն (109), վեր առի (43), կաշառք կասի (120), ձեռն արկի (90), ջրաւրհնիք բռնէք (120), ման գայ (131), ձեռաց գնաց (92), մեջ գծեց (136), յետ դառնան (134), դուս ելայ (29), կոտոր կու րնկնի (131), բաց թողին (136), փուչ ելաւ (72), երես կանգնեցին (135), անց կենայ (19), ճարն կտրեց (32), վերայ հասաւ (153), սլարտքի ներքև մտաւ (161), թախտ նստաւ (31), աթոռակալութիւն է վարել (120), բարով տվինք (126), դուրս տարան (52), սահմանք տեսին (152), ժետ ուղարկած (152), վեր ունիմ (102), յետ կու փախի (88), գլուխ քաշեց (135), երեսէն քշեց (122) և այլն:

¹ «Զաքարիա Աղուլեցու օրագրությունը», Երևան, 1938 (այսուհետև նշելու ենք միայն էջը՝ տողամիջում):

² Գր. Վանցյան, Պատմական քերականություն արեւելահայ լեզվի, Թիֆլիս, 1906, էջ 30:

³ Ս. Ղաղարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 378:

⁴ Ալ. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 473, 485:

⁵ Մենք հետևում ենք բարդ բառերի դասակարգման Ա. Արրահամյանի սկզբունքին: Տե՛ս Ա. Արրահամյան, Վերլուծականությունը հայերենի տարբեր մակարդակներում, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 3, էջ 44:

Ազոուկեցին գործածել է գրաբարյան մի քանի հարադրական բայեր (երբեմն մասնակի փոփոխություններով)՝ ձեռն արկի (90), գր.՝ ձեռն արկանել, յանձ շառաւ (152), գր.՝ յանձն առնում:

Իմաստային տարբեր նրբերանգների արտահայտությամբ հետաքրքրական են երես անվանական բաղադրիչով կազմված հարադրական բայերը՝ երես չեկաւ (118) — երեւալ, երես չի թողեց (122) — ընդունել, երես չի տարաւ (122) — ցանկանալ տեսնել, երեսէն քշեց (122) — հեռացնել, երես կանգնեն (131) — հակառակվել, դեմ կանգնել: Այսպես՝ Այս պատճառէս Պետրոս վարդապետն երես չեկաւ, փախաւ (118): Շահն երես չի տարաւ, հրաման արաւ, թէ՛ տարէք, դրէք Ղազվինու բ օրէն դէնն ֆլան բերթում (122): Դարցեալ, վեղիրն մինչի հոքտեմբերի ը ապրանք գրեց ու հարամն ապայ հոքտեմբերի ը ղրկեց շահն, շահն երես չի քողեց, երեսէն քշեց (122): Յենց որ Վենետիկու շուխայ գործողն, ծախողն գնան թուջին երես կանգնեն (131): Սէֆիդուլի խանի նօքարն, որ է ղաջար, բայաթ, խանին երես կանգնեցին (135):

Հայերենն օտար լեզուներից բայերն ամբողջովին չի փոխառում: Արեւելյան լեզուների (արաբերեն, պարսկերեն, թուրքերեն) բայական իմաստն Ազոուկեցին արտահայտել է.

ա) Հարադրական բայերով, որտեղ փոխառյալ է անվանական բաղադրիչը, իսկ բայական բաղադրիչը, որ ձևավորում է հարադրությունը, հայերեն բայ է՝ աղաթ անէն (130), հօքմ առաւ (71), բհամ գայ (162), գնայ ինադով (105), ջարիմայ գծեց (126), սարքար դրեց (82), մաղուլ էլաւ (123), ղայիլ չի կացան (99), հսաբն կտրի (63), մֆլիս սնդուն հանեցին (72), ղուլուղ կու մնայ (161), զառաբի նստաւ (146), արզ տվեց (104), հսաբ չեն տեսնում (163), զարար քաշեցի (149), սրզուն քշեցին (66):

բ) Համադրական եղանակով կազմված բայերով: Փոխառյալ ոչ բայական բառույթներից կազմվել են բայեր, որտեղ բայական մասնիկավորումը կատարված է հայերենի բայականումական օրենքներով՝ ել և աւալ մասնիկներով՝ բարիշեցին (53), բուխավեցին (102), բօլացաւ (129), գաջելու (65), զաֆտել ալ (142), թալանեցին (72), թամամի (99), խարջել ին (86), ղաբլաւ (71), մհրած ենք (98), փուշացաւ (73):

Վերոհիշյալ համադրական կազմությամբ բայերից մի քանիսի իմաստն արտահայտել է նաև վերլուծական եղանակով՝ զաֆտ արաւ (69), խարջ արին (75), խարջ գնաց (143), ղաբուլ արաւ (66), ղաբուլ ելաւ (126):

Ազոուկեցուն բնորոշը ոչ թե համադրական եղանակով, այլ հարադրությամբ՝ վերլուծական եղանակով բայեր կազմելն է, որ բարբառների և ժողովրդա-խոսակցական լեզվի յուրահատկությունն է: Նրա գործածած հարադրական բայերն իրենց կազմավորման հիմունքներով և բառական իմաստի տեսակետից կապված են բարբառների հետ, որտեղից և անցել են աշխարհաբարին, ուստի ժամանակակից հայերենին հարադատ են և տարբերություններ չեն դրսևորում: Դրանց առատ գործածությունը վկայում է երկի աշխարհաբար լեզվի մասին:

⁶ Տե՛ս Ա. Արրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, 1962, էջ 121:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում, էջ 125, 134:

Աղուեցին գործածել է անորոշ, անկատար, ապառնի, վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայները: Դրանք ձևավորված են հետևյալ մասնիկներով. անորոշ դերբայը՝ ել, իլ, ալ, ուլ, ոլ՝ ծիծաղելով (6), Լրելի (16), կարդալով (6), հասնուլ (16), գոլով (92), անկատարը՝ ում, իս՝ այրում (17), գալիս (51), ապառնի՝ ու, ի՝ տալու (99), դիտելի (95), վաղակատարը՝ ել, եալ, եր (էր)՝ կարդացել (160), բնակեալ (75), կացեր (81), էլէր (86), հաւակատարը՝ ած՝ բերած (89), գնացած (152), ենթակայականը՝ ող, օղ՝ գործողն (131), շինողն (96):

Անորոշ դերբայն իր ձևավորումով կապված է գրաբարի հետ և պահպանել է գրաբարի բոլոր խոնարհիչները: Գրաբարյան են ապառնի դերբայի ը, վաղակատարի (գրաբարի անցյալ դերբայը) եալ, ենթակայականի ող, օղ մասնիկներով ձևավորված դերբայները: Ու-ով ձևավորված ապառնի, ել, եր-ով՝ վաղակատար, ած-ով՝ հարակատար դերբայները բնորոշ են միջին հայերենին և բարբառներին: Վաղակատարի եր-ով ձևը հետագայում ընդհանրացավ արևմտահայերենում: Գործածել է ում և իս-ով (միայն գալիս, 101), տալիս (77) ձևավորված անկատար դերբայ, որ ում ճյուղի բարբառների յուրահատկությունն է:

Ժխտական դերբայը «Օրագրությունում» դեռևս ձևավորված չէ, այն իր լինելիության ընթացքում է: Ձևավորվում է անորոշ դերբայից՝ ե խոնարհման բաղերի մեջ ժխտական խոնարհման դեպքում դիտելի է ե>ի հնչյունափոխությունը՝ պրծանիլ չէ (101), չէն անիլ (139):

Անորոշ դերբայի ենթարկվել է ո, ու, է. ի հոլովման՝ տեսնելոյ (125), խմելու ջուր (62), դուրս գնալէ տէղ (16), հսաբ տէսնուլի (123): Ո հոլովիչը գրաբարյան է, ու-ն միջին հայերենի, բարբառների ու աշխարհաբարի հոլովիչն է, ստացվել է ոլ>ու հնչյունափոխումից: Է ունի հնդկահայ բարբառը¹⁰: Ի-ով մեկ օրինակ ունի, որին ենթարկվել է ու խոնարհման բայ: Ի հոլովիչ ունեն Շամախու, Ղարաբաղի, Աստրախանի և այլ բարբառները¹¹:

Իս մասնիկ ունեցող անկատար դերբայով գործողության ժամանակ ցույց տալը Աղուիսի բարբառի (նաև այլ բարբառների) յուրահատկությունն է, այնինչ Ջուղայի բարբառում այս ձևերը գործածական չեն: Այն արտահայտվում է անորոշ դերբայի սեռական հոլովով և վախտ բառով¹²: Երկուսն այս երկու միջոցն էլ օգտագործված է՝ Ամսրդամու գալիս (16), Ըսպհան գնալու վախտն (101):

Գրաբարի եալ մասնիկով ձևավորված անցյալ դերբայը հանդես է եկել նաև ոչ ժամանակային (ոչ ձևաբանական) կիրառությամբ, որտեղ այն միայն հարակատարի արժեքով է՝ ...Ունէր դստէրս հանգուցեալ (5): ...Երես անկեալ պաղատանօք աղաչեմ գձեղ (6):

¹⁰ Տե՛ս Ա. Արրահամյան, Հայերենի միտական դերբայը, «Գիտական աշխատությունների ժողովածու», ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտ, Երևան, 1947, № 2: Նույնի՝ Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 237—261:

¹¹ Տե՛ս Հր. Աճառյան, Քննություն նոր-Ջուղայի բարբառի, Երևան, 1940, էջ 283:

¹² Տե՛ս Ա. Արրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, էջ 290:

¹³ Տե՛ս Հր. Աճառյան, Քննություն նոր-Ջուղայի բարբառի, էջ 281: Նույնի՝ Քննություն Աղուիսի բարբառի, Երևան, 1935, էջ 287:

«Օրագրութիւն» մեջ խոնարհման համակարգում զիտելի են՝ ա) լծորդութիւնների փոփոխութիւն, բ) խոնարհման կանոնաւորում, գ) վերջավորութիւնների ձեւափոխութիւն, դ) նախահաւելիւածի և ստորագասական առաջին և երկրորդ ապառնիների սակաւ գործածութիւն:

Երկում սահմանական եղանակն ունի 9 ժամանակ:

Ներկա և աւելցալ աւելատար ժամանակները կազմում է ոչ միայն զրաբարին ու միջին հայերենին (նաև կ ճշուղի բարբառներին ու արեւմտահայ աշխարհաբարին) բնորոշ ձևերով, այլև արեւելահայ աշխարհաբարին (նաև ում ճշուղի բարբառներին) բնորոշ անկատար զերբայով և օժանդակ բայի խոնարհւած ձևերով: Գործածութեան հաճախականութեամբ զրաբարյան ձևվերը զերազանցում են մշտաներին:

Գրաբարաձև և կու, կ մասնիկներով ներկա և անցյալ անկատար ժամանակներն ունեն նույն զիմային վերջավորութիւնները: Կու և կ մասնիկները երկում գործածութեան տարբերակում չունեն: Դիմային վերջավորութիւնների պատկերը խոնարհիչներէ հետ հետևյալն է.

Ներկա

Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դ. եմ, իմ, ամ, ում	1-ին դ. եմք, ամք, անք, արք, իք
2-րդ դ. իս, աս	2-րդ դ. էք
3-րդ դ. է (ե), ի, ա (այ), ու, ոյ	3-րդ դ. են (էն), ին, ան, ուն

Անցյալ աւելատար

Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1-ին դ. էի	1-ին դ. էինք
2-րդ դ. — — —	2-րդ դ. — — —
3-րդ դ. էր (եր), այր	3-րդ դ. էին, ային

Բերենք բնագրային օրինակներ. ներկա՝ աղաչիմ (6), աղարկիմ (161), զնամ (102), տեսնում (98), կուղեմ (150), կասիմ (163), կամիս (11), զնաս (24), դուս կու լինիս (24), բերէ (101), բերի (100), տանի (102), մնայ (99) տեսնու (151), կու քաշէ (15), կու երևի (16), կու զնայ (6), կու մտնու (15), գիտեմք (91), դուրս դամք (102), դանք (102), կենաք (102), զիտէք (117), կուղէք (120), բռնէն (88), բռնեն (99), տանին (146), զնան (105), առնուն (89), կըշեն (12), կուտանին (24), կու զնան (15), կուտէսնուն (99): Անցյալ աւելատար՝ ունէի (98), շարժէր (114), դարմանայր (71), մէր կու մտանէր (74), կուղէինք (110), կուշէին (93), տային (140), կու փթաւէին (77), կու տային (140):

Դիմային վերջավորութիւնների մեծ մասը համապատասխանում է զրաբարին: Ներկա ժամանակի եզակի 3-րդ զեմքում և՛-ի փոխարեն երբեմն գործածում է և, հոգնակի 3-րդ զեմքում և՛-ի փոխարեն՝ ևն: Հոգնակի 1-ին զեմքի համար գործածում է զրաբարյան եմք, ամք վերջավորութիւնները: Ունի նաև անք, արք, իք: Աք և իք-ում զրաբարյան մ-ն բնկել է, և նրանք նույնացել են հոգնակի 2-րդ զեմքի հետ՝ իք, այք: Այս երևույթը տարածւած է Ադուլիսի քարրառում, ուր բայերը հոգնակի 1-ին և 2-րդ զեմքերում ունեն զիմային

միևնույն վերջավորությունը¹³։ Հարադատ բարբառից էլ անցել է Ազուլեցու լեզվին։ Ասվում էր բարբառյան մ-ն դարձել է ն, որ տարածվում է միջին հայերենում։ Անցյալ անկատար ժամանակի հոգնակի 1-ին դեմքում գրաբարի ևսվ-ի փոխարեն ունի ևին, որ միջին հայերենի վերջավորությունն է։

Ներկա և անցյալ անկատար ժամանակներում գործածել է ե, ի, ա, ու, ո լծորդության բայեր, որոնք հիմնականում համապատասխանում են գրաբարի նույն լծորդությունների բայերին։ Սակայն նկատելի են նաև լծորդության փոխանցումներ ինչպես գրաբարից ավանդված բայերի, այնպես էլ նորակազմ բայերի։

Ա||ի—գինովանալ||գինովանելն (161)։

Ե||ի—յուղարկել, աղարկէ (102)||աղարկիմ (161), ուղել, ուղեմ (101)|| ուղին ոչ (77), ժողովել||ժողովին (135), ասել||կասիմ (163)։

Ի||ի—տանիլ, տանին (146)||տանէ (78), տանէն (168)։

Անել||նուլ—տեսանել||տէսնում (102), հասանել||հասնու (100)։

Նուլ||նել—առնուլ, առնու (100)||առնիմ (101)։

Ինչպես տեսնում ենք, որոշ բայեր ցուցաբերում են տատանումներ, գործածվել են տարբեր լծորդություններով։

Մի քանի բայերի ևն ածանցի և ձայնավորն ընկել է, սակայն լծորդությունը մնացել է անփոփոխ։

Անել||նել—հասանել||հասնէ (140), հարցանել||կու հարցնեմ (6)։

Անիլ||նիլ—մեռանիլ, մեռանի (140)||մեռնի (89), անկանիլ||ընկնի (92)։

Թողուլ պարզ բայը դարձել է ածանցավոր՝ ստանալով և ածանցը, սակայն լծորդությունը չի փոխել։

Ուլ||նուլ—թողուլ||թողնու ոչ (146)։

Մի բայի էլ և կամ չ ածանցն է ընկել։

Նիլ||չիլ||իլ—փախնիլ||փախչիլ||կու փախի (88)։

Ներկա ժամանակի եզակի III դեմքում ե խոնարհման մի շարք բայեր ունեն ոչ թե և, այլ ի վերջավորություն ներգործածե խոնարհման դեպքում։ Այստեղ առկա չէ լծորդության փոխանցման երևույթը, այլ է վերջավորության ի-ի փոխվելը։ է>ի փոփոխությունը դիմային վերջավորության պատմական փոփոխություն է, որ արդեն ամրապնդվել էր միջին հայերենում և առկա էր հայերենի բարբառներում։ Հետագայում դառնում է տիրապետողը, չհաշված մի քանի բացառությունները։ Ազուլեցին ունի՝ ածի (131), առուտրի (81), բանի (14), բընդի (88), աղարկէ (102), նաև՝ աղարկի (101), բերէ (131), նաև՝ բերի (145), դնի (102), կանչէ (135), նաև՝ կանչի (138), կոտրատի (146), կտրի (152), փոխի (140), թուրքացանի (140), յետ դարցնի (131), կասի (10), կանէ (129), նաև՝ կանի (24)։

Մի քանի բայեր Ազուլեցին գործածել է բարբառային հնչյունափոխությունում, որի հետևանքով դիմային վերջավորությունները փոխվել են՝ տալ—կու տին (77), գնալ—կու գնէր (134), գալ—կու գին (61), կու գէր (144)։ Անճանաչելիորեն փոխված է ինել բայը, մնացել է միայն և հնչյունը, և ներկա ժամանակում կու լինիմ (98), կու լինիս (24), կու լինի (85) ձևերի հետ գործածել է կնի (75), կրնի (152), կնին (146) բարբառային ձևերը։

Ազուլեցին ներկա և անցյալ անկատար ժամանակները գործածել է նաև

¹³ Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն, Քննություն Ազուլիսի բարբառի, էջ 241։

արևելահայ աշխարհաբարին (նաև ում ճյուղի բարբառներին) բնորոշ անկատար դերբայով և օժանդակ բայի խոնարհված ձևերով՝ գնում էմ (104), դնում այ (13), այրում է (17), կտրում էն (163), ուզում են (31), վախում ի (87), շինում էր (83), ուզում ին (31), շինում էին (47) և այլն:

Ապառնի և անցյալ ապառնի ժամանակներ քիչ է գործածել: Գրանք կազմված են ու մասնիկով ձևավորված ապառնի դերբայով և օժանդակ բայի ներկա ու անցյալ անկատար ժամանակներով՝ տալու հմ (70), տալու այ (100), է տալու (99), տալու էր (163): Ապառնի ժամանակն իր կազմությամբ տարբերվում է դրաբարի համանուն ժամանակից: Այն միջին հայերենի, ում ճյուղի բարբառների և աշխարհաբարի ձևով է:

Վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակների բայաձևերը բազմազան են: Նրանք հանդես են եկել միջին հայերենի, ում ճյուղի բարբառների և արևելահայ աշխարհաբարի ձևերով: Վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակները ձևավորված են ևլ մասնիկով կազմված վաղակատար դերբայով և օժանդակ բայով՝ տվել ամ (101), եկել աս (135), բերել այ (118), տվել անք (101), էք շինել (144), ասել ան (131), մհրել ի (87), դնացել էր (80), էին շինել (95): Այս ձևերը երկուսն Կրակչոռն են:

Արևմտահայերենին և և ճյուղի բարբառներին բնորոշ ր մասնիկով ձևավորված վաղակատար դերբայով և օժանդակ բայով կազմված վաղակատար ժամանակների երեք գործածություն է հանդիպում՝ Վէթիլ ին արարեր (149), է կացեր (81), նօքար էլէր էր (86): Գրաբարյան ձևերը ևս սակավ են՝ եկեալ էր (49), էր արարեալ (148), էն թաղեալ (130), ավերեալ էր (81), թագաւորեալ էր (121), ին բնակեալ (75), շէմ տէսեալ (71) և այլն:

Հարակատար և անցյալ հարակատար ժամանակներն իրենց ձևավորումով կապված են միջին հայերենի և բարբառների հետ՝ զրած հմ (6), փախած է (7), է բերած (89), մհրած էնք (98), զրած էի (6), ին տված (72) և այլն:

Հարակատար և անցյալ հարակատար ժամանակներում Աղուիցին միշտ մնայուն, հարատևող դրություն կամ վիճակ չի արտահայտում, այլ՝ արդեն ավարտված, վերջացած գործողություն, այսինքն՝ վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակների իմաստով են: Այսպես է նաև Աղուիսի բարբառում, որտեղ վաղակատարը և հարակատարը միևնույն ձևով են¹⁴:

Անցյալ կատարյալ ժամանակի կազմությունն ունի բնահանրություններ և տարբերություններ դրաբարի հետ: Տարբերություններն իրենց հերթին միջին հայերենի ու բարբառների հետ ունեցած բնահանրություններն են ցուցադրում: Անցյալ կատարյալ ժամանակում վերջավորությունների գործածության հարցում միօրինակություն չկա: Խառն են ներգործած և կրավորած և խոնարհման վերջավորությունները, անցյալ կատարյալի հիմքի կազմությունը: Միևնույն բայը հանդես է գալիս մերթ ներգործած և, մերթ կրավորած և վերջավորությամբ, մերթ արմատական, մերթ էլ բաղադրյալ-ցոյական հիմքով: Այստեղ զգալի են Կարբառային ուժեղ ներթափանցումները: Նախահավելվածով օրինակները հազվադեպ են՝ էհաս (96), եհաս (96):

¹⁴ Նույն տեղում, էջ 274:

Անցյալ կատարյալի դիմային վերջավորությունների պատկերը հետևյալն է.

Ներգործածն		Կրավորածն	
Նգակի բիվ	Հոգնակի բիվ	Նգակի բիվ	Հոգնակի բիվ
1-ին դ. ի	աք, իք, ինք	1-ին դ. ալ	աք, անք
2-րդ դ. իր	—	2-րդ դ. —	—
3-րդ դ. Օ	ին	3-րդ դ. աւ(ավ), եաւ	ան

Բերենք բնագրային օրինակներ՝ ծախեցի (159), ըստանեցիր (128), արհնեց (82), բռնեցինք (109), «Ամէն մի ըստ միոչէ գ դավտար գրեցաւ» (100), գնացիք (75), «Մեք, Զաքարէս, Շմաւոնի կնիկն գնացաւ կաթուղիկոսն մօտ» (100), ծաղկեցին (65), կացայ (69), շորացաւ (62), բարցեաւ (122), բարցաւ (122), «Քանդի շատ մարգի վկայութենովն իմացաւ, որ սայ... ժէթիմ էր» (85), անցկացանք (14), մեծացան (92) և այլն:

Ազուկեցին ամենից շատ գործածել է անցյալ կատարյալ ժամանակը: Դիմային վերջավորությունները հիմնականում համընկնում են գրաբարի հետ: Տարբեր են ներգործածն և կրավորածն խոնարհումների հոգնակի 1-ին դեմքի իմ, ինմ, անմ և կրավորածն խոնարհման եզակի 3-րդ դեմքի եաւ վերջավորությունները: Եաւ վերջավորությամբ գործածել է բարցեաւ (122): Մեզ թվում է, թե այն կազմված է ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի նման՝ հանգեաւ (148): Միևնույն բայի համար գործածել է աւ, իմ, ինմ վերջավորությունները, որ ցույց է տալիս աւ→իմ→ինմ առաջացման պատմական ուղին՝ գնացաք (110), գնացիք (75), գնացինք (40): Ունի նաև անմ վերջավորությունը, որ առաջացել է աւ-ից ան-ի հավելմամբ: Միևնույն բայի համար գործածել է այս երկու ձևերն էլ՝ դուրս էլաք (41), դուրս էլանք (55), հասաք (5), հասանք (35), անցկացաք (14), անց կացանք (14): Անմ և ինմ վերջավորությունները հատուկ են միջին հայերենին և բարբառներին:

Ե խոնարհման կաւել (—կարողանալ) բայը ներգործածն և կրավորածն վերջավորություններով է՝ կարացին (75)—կարացան (125): Գրաբարում միայն ներգործածն է խոնարհվում, որովհետև ե լծորդության չեզոք սեռի բայ է: Ասել բայի անցյալ կատարյալի հիմքը գրաբարում ասաց է: Ազուկեցին ունի ասացի (98)—ասի (101), ասաց (134)—ասաւ (100): Երկրորդ ձևերը կան Զուղայի բարբառում: Ածել բայի կատարյալի հիմքը գրաբարում արմատական է՝ ած: Երկուսն էլ բաղադրյալ-ցոյական է՝ ածեցի (67): Գրաբարում բերել բայի կատարյալի հիմքն արմատական է՝ բեր, որը և եզակի 3-րդ դեմքի բայածին է՝ բեր կամ վանկային աճեցումով՝ երբ: Երկուսն էլ եզակի 3-րդ դեմքն է բերաւ (124): Գրաբարում անցանել, գտանել, ելանել, հասանել, մտանել, տեսանել բայերի անցյալ կատարյալի հիմքն արմատական է: Նրանք ստանում են ներգործածն, ըստ պահանջի (միայն ներգործական սեռի բայերը)՝ նաև կրավորածն վերջավորություններ: Երկուսն անցնել, գտնել, ելնել, հասնուլ, մտնել, տեսնուլ բայերն ունեն և՛ ներգործածն, և՛ կրավորածն վերջավորություններ, սակայն վերջիններս՝ ոչ ըստ պահանջի՝ անցաւ (114), գտաւ ոչ (75), դուրս ելայ (37), դուրս ելաւ (82), դուրս ելան (63), հասայ (58), հասաւ (51), հասան ոչ (136), մտայ (30), մտաւ (161), մտան (75), տեսայ (134), տեսաւ (111), տեսան (152), ունի նաև՝ էհաս (96), տէսի (100), տե-

սին (152): Զուղայի բարբառում հասնել և մտնել բայերն անցյալ կատարյալում ստանում են միայն կրավորաձև վերջավորություններ՝ հասա, մտա. իսկ տեսնել-ը երկու ձևով է՝ տեսի—տեսա: Երկու ձևերն էլ կան երկուսում:

Երկուսում ներգործաձև և կրավորաձև վերջավորությունների գործածության օրինաչափություն չկա: Կրավորաձև վերջավորություններով են և՛ ներգործական, և՛ չեզոք սեռի բայերը, իսկ ներգործական սեռի բայերն էլ կրավորաձև վերջավորություններ ստացել են ոչ ըստ պահանջի, այսինքն՝ կրավորական սեռի չեն:

Արսել = սարսել (չբ) և սատակել (նբ) բայերն ունեն կրավորաձև վերջավորություններ՝ արսեցան (142), սատակեցաւ (72): Քաշել բայը բաղադրյալ-ցոյական հիմքով է և ներգործաձև վերջավորություններով՝ քաշեցի (45), քաշեց (81), քաշեցին (130): Բայց ունի նաև՝ քաշաւ (42), այդպես էլ՝ դաբլաւ (71), որ բարբառային յուրահատկություն է:

Ներգործաձև խոնարհման անցյալ կատարյալի ելակի 3-րդ դեմքը վերջավորություն չի ստանում: Անցյալ կատարյալի անշեշտ հիմքը հանդես է գալիս որպես դիմավոր ձև: Երկուսում մեծ մասամբ այդպես է՝ արհնեց (82), բռնեց (101), թողեց (126): Այդպես է միջին հայերենում և բարբառներում: Մի քանի օրինակում միայն դիմավոր ձև է դարձել շեշտված հիմքը, որտեղ հնչյունափոխված երկբարբառները վերադարձել են նախկին վիճակին՝ աւանդեաց (117), յիմնարկեաց (81), փրկեաց (38): Այս գրաբարի օրինաչափությունն էր:

Ի խոնարհման բայերից անկանխի-ը հանդես է եկել ընկնել ձևով: Միայն երկու անգամ գործածվել է անգաւ (66, 114) ձևով: Նրեիլ բայը հանդես է եկել և և ա լծորդ ձայնավորներով՝ երեեցաւ (64), երեացաւ (126): Ապրել բայը կրավորաձև խոնարհման հետ զուգահեռ խոնարհվել է ներգործաձև՝ ապրեցաւ (89)—ապրեց (166): Ասրեց բայաձևը կա Զուղայի բարբառում:

Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի ի-ն, հանդիպելով վերջավորության ա ձայնավորին, հնչյունափոխվում է ե-ի՝ հանգեաւ (148): Սակայն որոշ օրինակներում այն ընկել է՝ կորաւ (161), փախաւ (73, 145):

Ա խոնարհման բայերը գրաբարի համեմատությամբ տարբերություններ չեն տալիս: Ածանցավոր բայերից դառնալ-ը երկու հիմքով է՝ դառց (դառց), որ գրաբարյան դառծ-ն է և դառ, որ կա Աղուլիսի բարբառում՝ դառցաւ (98), դարցաւ (114), դառաւ (85): Դառնալ բայը ներգործական սեռի իմաստով գործածվելիս ստացել է ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ բարցեաւ (122), բարցաւ (122), բարցին (45): Կենալ բայը (գրաբարում՝ կալ) նույնպես ներգործաձև և կրավորաձև վերջավորություններով է՝ կացի (109)---կացայ (69), կացին (49)—կացան (94):

Վերջավորությունների օգտագործման հարցում երկուսում միօրինակություն չկա: Ազուլեցին աշխատում է հարադատ մնալ գրաբարի ներգործաձև վերջավորություններին, սակայն բարբառներում և ժողովրդա-խոսակցական լեզվում գործածական էին այդ բայերը կրավորաձև վերջավորություններով: Սվ ահա երկուսում նրանք հանդես են գալիս մերթ ներգործաձև, մերթ կրավորաձև վերջավորությամբ:

Ու խոնարհման բայերից առնուլ և քողնուլ-ը (գր.՝ թողուլ) ևս զուգահեռաբար ստացել են ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ ներ-

գործական սեռի դեպքում՝ առի (109)—առայ (168), առեց (41)—առաւ (126), առին (106), առան (92), թողեց (126)—թողաւ (107)։ Գրաբարում այս բայերը խոնարհվում էին ներդործածե, հարկ եղած դեպքում՝ նաև կրավորածե։ Զուղայի բարբառում այս բայերը գրաբարի արմատական հիմքի դիմաց երկու հիմք ունեն՝ արմատական և բաղադրյալ-ցոյական՝ առեց||առ, քողեց||քող։ Այդպես է և Ազուլեցու երկում։

Հրամայական եղանակի որոշ բայածեեր համընկնում են գրաբարի հետ, իսկ որոշն էլ՝ շեղվում։ Ա խոնարհման պարզ բայերի եղակի հրամայականը կազմվում է ներկայի հիմքից և վերջավորությամբ՝ այրէ (131), շինէ (82), ժողովէ (161)։ Հոգնակի հրամայականը կազմվում է և՛ ներկայի, և՛ անցյալ կատարյալի հիմքից և՛ վերջավորությամբ՝ պահէք (117), բռնէք (120), բաժանէցէք (117), ժողովեցէք (138)։

Հրամայական եղանակով ի խոնարհման մեկ բայ ունի՝ նստէ (143)։ Ա խոնարհման պարզ բայերի եղակի հրամայականը կազմվում է ներկայի հիմքին ա վերջավորության ավելացումով՝ գնայ (99)։ Ան ածանց ունեցող բայերի եղակի հրամայականը կազմվում է անցյալ կատարյալի հիմքին իր վերջավորություն ավելացնելով՝ թուրքացիր (161)։

Անկանոն բայերի հրամայականի հետևյալ օրինակներն է գործածել՝ արարէք (117), դրէք (122), տուր (77), տվէք (89), եկ (69), արի (161), եկէք (117), վեր կալ (135)։

Մի քանի բայերի եղակի թվի բուն հրամայականը գրաբարի անցյալ կատարյալի հիմքն է շեշտի տակ։ Հոգնակին կազմվում է եղակիի վրա և՛ վերջավորության ավելացումով՝ առ (82), առէք (111), բեր (101), բերէք (111), տար (139), տարէք (117), տէս (162), տեսէք (163), կացէք (125)։

Ե խոնարհման պարզ բայերի եղակի հրամայականը տարբերվում է գրաբարից։ Գրաբարյան եա-ի փոխարեն ունի և՛ վերջավորությունը։ Այս է-ն կա Ազուլիսի բարբառում։ Նստել բայի եղակի հրամայականը գրաբարում նիստ է, իսկ երկում այն ստացել է և՛ վերջավորություն։ Մի քանի անկանոն բայի հոգնակի հրամայականը տարբերվում է գրաբարից։ Գրաբարյան ղի՛ւ, տո՛ւ, եկա՛յլ-ի փոխարեն ունի ղրև, տվև, եկև։ Եղակի թվում եկ-ի կողքին ունի նաև արի ձևը։ Դրև, տվև, եկև և արի ձևերը կան Զուղայի բարբառում։ Արարատյան և Զուղայի բարբառներում հոգնակի հրամայականը կազմվում է ներկայի հիմքից և և՛ վերջավորությունից։ Այդպես է Ազուլեցու երկու օրինակում՝ պահէք (117), բռնէք (120)։

Ըղծական եղանակի բայածեերը ձևական կողմով համընկնում են գրաբարի ներկա և անցյալ անկատար ժամանակների բայածեերին։ Վերջիններս ժամանակի ընթացքում զրկվել են իրենց հին իմաստից և ձևոր բերել նոր կատարելիք գործողության կամ եղելության իմաստ։ Նույն բայածեերը մերթ ներկա և անցյալ անկատար են, մերթ էլ՝ ըղծական եղանակի բայածեեր։ Ըղծական եղանակի դիմային վերջավորություններն են.

Ապառնի		Անցյալ ապառնի	
Եղակի թիվ	Հոգնակի թիվ	Եզ. ք.	Հոգն. ք.
1-ին դ. եմ, իմ, ամ	ենք, ինք, աք, անք, ամք, ուք	—	—
2-րդ դ. ես (էս), իս, աս, ուս	իք, աք	—	—
3-րդ դ. է, ի, այ, ու	են (էն), ին, ան, ուն	էր	—

10 Հանդես, № 2

Բերենք բնագրային օրինակներ՝ շինեմ (90), լինիմ (118), գնամ (76), դրես (160), խարչիս (82), գնաս (26), տեսնուս (135), հարցնէ (29), հասնի (139), գնայ (152), առնու (51), գիտենք (138), առնինք (110), իմանաք (98), գնամք (29), գնաք (45), գնանք (53), տեսնուք (102), հանդիբիք (6), տաք (6), արհնեն (118), սպանին (31), դառնան (134), տէսնուն (150), ծածկէր (107), լինէր (102):

Հոգնակի I դեմքի վերջավորություններից գրաբարյան է միայն ամֆ-ը: Ենֆ, ինֆ և աեֆ-ում գրաբարյան մ-ն դարձել է ն, իսկ աֆ և ուֆ-ում դուրս է ընկել, և նրանք նույնացել են հոգնակի 2-րդ դեմքի հետ, որը, ինչպես արդեն նշել ենք, Ագուլիսի բարբառի յուրահատկությունն է: Հոգնակի 2-րդ դեմքի գրաբարյան ալֆ-ի փոխարեն գործածվել է աֆ:

Ըղձական եղանակում ևս գործածվել են լծորդափոխ բայեր: Ապառնի ժամանակի 3-րդ դեմքում ևս կատարվել է ն>ի փոփոխությունը:

Հետաքրքրական է առնուլ բայը, որ հանդես է եկել երեք վերջավորություններ՝ առնու (51), առնլ (106), առնի (71)՝ ...Գալիս էին, թէ մեր նավն առնու (51): ...Գնաց այս Տրէջանիս վերայ, որ այս աղգս առնէ (106): ...Որ չուրի Սիմոն փողն ժողովի տայ, գրերն առնի (71):

Այս եղանակում էլ լինել բայը հանդես է եկել նի (98), ընի (162), ընիս (17) բարբառային ձևերով:

Պայմանական եղանակի բայաձևերը համընկնում են միջին հայերենի և կու (կ) ճյուղի բարբառների սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների բայաձևերին՝ կու կորէ (161), կու մեռանի (133), կնի (135), կու տայ (161), կու տեսնում (101)՝ Աստուածապովն ել ինձ Զաքարիս մայա չէ տալ, թէ՛ տանի, ախպօրն նման կու տայ խանի, բէկի, կու կորէ (161): ...Ով ոք հավի միս կամ ձուն որ ուտի, իս օր կու մեռանի (133): Շմառնի դառավխանի հսաբն նորն կու տեսնում (101): Տեսնուս, ինչպէս կնի (135):

Հարկադրական եղանակի բայաձևեր քիչ է գործածել: Դրանք կազմված են պիտի-ի խոնարհված ձևերով և անորոշ դերբայով՝ գալ պիտիս (151), գնալ պիտէր (49): Որոշ դեպքերում պիտի-ն մնում է անփոփոխ, հանդես է գալիս որպես եղանակիչ և ավելանում է խոնարհված բայաձևի վրա՝ պիտի գայ (118), պիտի տաս (130), պիտի անի (150): Այս օրինակներում հարկադրական եղանակի բայաձևերը ժամանակակից լեզվի արտահայտություն ունեն:

Արդեն միջին հայերենում գրաբարի ստորադասական եղանակի I և II ապառնիները չնչվել էին: Ագուլեցին այդ ժամանակների արտահայտման համար գործածել է աշխարհաբարի սահմանական եղանակի ապառնի, ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակները: Սակայն երբեմն ցանկացել է հարազատ մնալ գրոց լեզվին և գործածել է գրաբարի I և II ապառնի ժամանակները: I ապառնի՝ մտանիցեմ (6, 29), էլանիցեմ (6), գրիցեմ (29), հանդիբիցէ (5, 29), առնիցէք (6): II ապառնի՝ տացէ (29), եղիցի (149): Երբեմն շփոթված են I և II ապառնիների կազմության հիմքերը և դիմային վերջավորությունները: Այսպես, գործածել է գրեսցեմ (6) և արարիցեմ (5) ձևերը: Այնինչ պետք է լինի գրիցեմ կամ գրեցից, առնիցեմ կամ արարից:

Երկրորդական րադադրյալ ժամանակները կազմված են ապառնի ու հարակատար դերբայներով և լինել ու կալ բայերի խոնարհված ձևերով: Այս

Ժամանակները միջին հայերենի, աշխարհաբարյան ու բարբառային ձևով են՝ տալու լինիմ (99), յետ տալու լինիք (131)՝ ըզձ. եզ., տալու կրնի (99)՝ պայմ. եզ., քնած կնի (103)՝ սահմ. եզ., ներկա, տված կնի (99)՝ պայմ. եզ., կայ գրած (7, 15, 98), գրած կայ (22), կայ նստած (7), կայ տված (11), կէր գրած (90), կէր շինած (90)՝ սահմ. եզ., ներկա և անցյալ անկատար:

Անցյալ դերբայով և եւս օժանդակ բայի I ապառնիով կազմված գրաբարի ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնիի մի գործածություն ունի՝ ...Ավուր դատաստանին յիշեսս իցէք (6):

Պատճառական բայերն արտահայտված են 2 ձևով՝ ածանցմամբ և նկարագրական եղանակով: Գործածել է ոյց (ուց), ուցսն, ցն(ցր)՝ացն, եցն և ցան ածանցները: Ոյց (ուց), ուցան ածանցները գրաբարյան են: Ազուլեցու գործածած օրինակներն են՝ դարցուցանեմ (111), նստուցին (31), անց կացուցին (115), հանգուցին (84), սէվացուցին (72), հասուցին (119), արծակացոյց (78): Ցն/ցր/ացն, եցն ածանցը տարածված էր միջին հայերենում և բարբառներում՝ վախեցնում էն (131), կու դադարկացնեն (16), յետ դարցնի (131), բանացրի (116), բանացրուց (124), կորցրին (153), քուրդացրուց (140): Ունի ցան ածանցը, որ կա Հնդկահայ բարբառում ցան և Ազուլիսի բարբառում ցա՛ն, ցա՛ն ձևերով¹⁵ թուրքացանի (140), նստացանէն (153), էր բանացանում (102), անց կացանեն (131):

Նկարագրական եղանակով պատճառական բայերը կազմված են անորոշ դերբայով և տալ բայի հարադրությամբ՝ բանալ տայ (146), կտրել կու տայ (122), բռնել կու տան (153), գրել տվի (96): Ունի նաև կրկնակի պատճառական՝ կազմված պատճառական ածանց ունեցող բայով և տալ բայի հարադրությամբ՝ խմեցնել կու տայ (161): Վերոհիշյալ ձևով պատճառականի կազմումը հատուկ էր Զուղայի բարբառին¹⁶:

Պատճառական բայերի խոնարհումը գրաբարից տարբերվում է անցյալ կատարյալի հիմքի կազմությամբ և դիմային վերջավորություններով: Անցյալ կատարյալ ժամանակի եղակի III դեմքում բայերն ունեն գրաբարյան ոյց՝ արծակացոյց (78) և ոյ երկբարբառի հնչյունափոխությամբ ուց՝ բանացրուց (124), քուրդացրուց (144), որ հատուկ էր միջին հայերենին, նաև՝ բարբառներին:

Հասուցին բայաձևի կողքին ունի հասուցրին (96) բայաձևը, որ ենթադրել է տալիս ուցն ածանց:

Վ ածանց ունեցող բայերի մի մասը կրավորական սեռի են, մի մասն էլ միջին անդրադարձ սեռային առում ունեն՝ կոտորվի (153), կու ջոկվի (12, 17), է տեսվել (17), շինված էր (90), էր ճղված (135), բացված էր (118), էին բաժանված (91), կարքված էր (67), էր ծածկված (96), խախթված էր (81), լցված էր (81), բռնված (67): Կրավորական սեռի իմաստն արտահայտել է նաև գրաբարյան ձևով՝ կրավորաձև խոնարհման վերջավորությունների միջոցով՝ ...Ավել անուն ոչ կոչի Թարխան (70): Որ այժմ ասի Մելիքենց կհաւ (141): ...Համբաւն ամենայն երկիր կու սիոնի (161): ...Զ, է մարդ կու խէխտի (75), բաժանեցաք (117), լցաւ (114), աղատեցայ (101), կոչեցաւ (117),

¹⁵ Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն, Քննութիւն Նոր-Զուղայի բարբառի, էջ 269. Քննութիւն Ազուլիսի բարբառի, էջ 275:

¹⁶ Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն, Քննութիւն Նոր-Զուղայի բարբառի, էջ 269:

անվանեցաւ (124), կոտորեցաւ (31), շինեցաւ (90), ժողովեցան (128) և այլն։
 Հաճախ Վ ածանցի առկայութեան դեպքում էլ բայերն ստանում են կրավորաձև վերջավորութիւններ՝ կու ջոկվի (17), բաժանվեցայ (115), ծախվեցաւ (105), կարգվեցայ (168), կիտվեցան (136), շինվեցաւ (35), ըսպանվեցաւ (16) և այլն։ Այս երևույթը բնորոշ է միջին հայերենին։ Կրավորական սեռի անորոշ դերբայի հանդիպած օրինակում՝ ...Ոչ կարում եմ պարտականի ձեռաց ազատիլ (163), բայն ունի միջին հայերենին և Աղուլիսի բարբառին բնորոշ իլ վերջավորութիւն։ Վ ածանցի հետ բայերի ներգործածւած խոնարհման վերջավորութիւններ ստանալը դեռևս չի տարածվել։ Իրանք սակավ գործածութիւն ունեն՝ սպանվեց (32), թամամվեց (55)։ Այս երևույթը բնորոշ է Զուղայի բարբառին։

Ժխտական խոնարհումը կազմում է շ, շի, շէ, ոչ ժխտականներով և մի արգելականով՝ շկէր (6), շի կէր (125), ոչ գոյ (98), ուղին ոչ (77), տալ շեմ (88), շէ տալ (161), շէ երևիլ (16), կարիլ շէ (24), շէ տալիս (31), տալիս շէ (104), առէլ շէր (86), շէր հասել (129), շէմ տեսեալ (71), ելած շէ (138), շեն ելած (146), շտարաւ (41), շի տարաւ (122), զրէցի ոչ (6), ոչ զրեցի (6)՝ սահմանական եղանակ, տամ ոչ (99), ոչ անէ (45), շի գան (66), շգան (8), շաղարկի (126), շի ընկնի (92)՝ ըղձական եղանակ, գալ շէմ (120), պրծանիլ շէ (101), յետ շեն տալ (131)՝ պայմանական եղանակ։

Կու (կ) եղանակիչով կազմված սահմանական եղանակի ներկա ու անցյալ անկատար ժամանակների և պայմանական եղանակի ժխտական խոնարհումը կազմել է անորոշ դերբայով (և խոնարհման ժամանակ ե>ի փոփոխութեամբ) և օժանդակ բայի ժխտական ձևերով, որոնք դրվում են դերբայից և՛ առաջ, և՛ հետո՝ գնալ շէ (15), շի հասնու (16), շի լինիլ (131), կարիլ շէն (75), տալ շես (101) և այլն։

Միջին հայերենում օժանդակ բայը դրվում էր դերբայից առաջ։ Օժանդակ բայի ետագաս գործածութեամբ հանդիպող օրինակները բարբառային են (Աղուլիսի բարբառ)։

Աղուլեցին միայն մեկ բայի ժխտականը կազմել է պարսկերենից փոխառյալ նա (ى) մասնիկով՝ ...Անունն նորայ նայ կու յիշէն (152)։

Արգելական հրամայականը կազմում է մի, միմ, մէմ արգելականներով և անորոշ դերբայով։ Ա խոնարհման բայերն ունեն ել և իլ վերջավորութիւն, սակայն վերջինիս դեպքում բայի սեռը չի փոխվում՝ մի ազահութիւն անիլ (85), ուղիլ մի (77), ասիլ միք (98), այրել մէք (131)։ Արգելական հրամայականը Արարատյան և Զուղայի բարբառի ձևով է։ Մի, միմ մասնիկները կան նաև Յդնայի ենթաբարբառում։ Մի արգելականով և անորոշ դերբայով արգելական հրամայական հանդիպում է նաև միջին հայերենում։

Աղուլեցին գործածել է առնել, ղնել, լսել, մեղանշել, տալ, գալ, ուտել, լինել և ունել անկանոն բայերը։ Ճանաչել, յառնել, յանցանել, ըմպել և երբալ բայերի գործածութիւններ չեն հանդիպում։ Լսել բայը կանոնավոր է։ Մյուս բայերի զուտ զրարարյան ձևերը սակավ են։ Բարբառային ձևերը համընկնում են զրարարյան ձևերին։ Գերակշռողը բարբառային ձևերն են, որոնց մեծ մասը այսօր էլ գործածվում է նույնութեամբ։ Աղիւ բայածեր զրարարում անցյալ կատարյալ ժամանակի եղակի II դեմք է, իսկ երկուսն ալն եղակի III դեմք է, որ զալիս է միջին հայերենից՝ Սարքար Թումանեց Առաքելն Լղիւ, որ շինէ (149)։ Այդպես է և Լաուր բայածեր՝ ...Յին դիւ կէր թաղաւորաց, նշանց Լաուր,

ղաբուլ արաւ (66)։ Եկիւք-ը դրաբարի անցյալ կատարյալ ժամանակի 2-րդ դեմքի բայաձև է։ Երկում այն հոգնակի I դեմք է՝ Յուլիս իէումն ես Ձաքա-
քիայ, պարոն նիկողոսն այսօր Երեանայ Եկիւք Աղուիս (68)։ Հոգնակի առաջին և երկրորդ դեմքերը նույնն են Աղուիսի բարբառում։

Անկանոն բայերն ունեն դրաբարին, ում և կ ձյուղի բարբառներին (նաև միջին հայերենին) բնորոշ արտահայտություններ։ Այսպես՝ անցյալ անկա-
տարի եղակի III դեմքի համար գործածում է՝ չանէր (136), բան կանէր (114), էր դաւի անում (86)։

Աղուեցին գործածել է եմ, գու և կալ (=կա) պակասավոր բայերը։ Գու բայը դրաբարյան ձևով է՝ ոչ գոյ (98), գուով (92)։ Կալ բայը գործածել է դրաբարյան՝ կայ (106), կայր ոչ (154) և Ջուղայի բարբառի ձևերով՝ կէր (125)։

Եմ բայի խոնարհման պատկերը հետևյալն է.

Ներկա

Եզ.	I դ. եմ, էմ, ամ, չեմ	Հոգն. I դ. ենք, անք, էք, չենք, չէնք
	II դ. էս, աս, չես	II դ. էք, չէք
	III դ. է, ե, ա, այ, չէ, չի	III դ. են, էն, ան, չեն, չէն, չին

Անցյալ անկատար

Եզ. I դ. էի, ի, չի	Հոգն. I դ. էինք, ինք, չէիք
III դ. էր, եր, չէր, չեր	III դ. էին, ին, չէին

Առաջին ապառնի

Յգ. III դ. իցէ	Հոգն. II դ. իցէք
----------------	------------------

Բնադրային օրինակներ են՝ դնում եմ (40), ուղում էմ (104), տվել ամ (101), գալ չեմ (101), խաբար էս (112), եկել աս (135), տալ չես (101), այ-
րում է (17), այս ե (116), ա անում (135), առել ալ (150), կարդացել չէ (160), չի հասնուլ (16), գրած եմք (107), տվել անք (101), մեք շահի սէվան էք (125), ուղում չենք (135), ուղում չէնք (77), էք շինել (144), կենում չէք (117), ծակել եմ (25), կտրում եմ (163), եկել ան (76), դնալ չեն (25), չէն ձգել (120), տալ չին (81), էի եկել (65), վախում ի (87), եկել չի (100)՝ 1-ին դեմք, տալու էր (163), հող եր (155), չէր հասել (129), չեր եկել (62), էինք դնա-
ցել (63), վեքիլ ինք (107), չէիք տեսել (54)՝ 1-ին դեմք, շինում էին (47). վաղջանել ին (81), չլին տեսել (107), բավական իցէ (6), յիշեալ իցէք (6)։

Գրաբարյան են եմ, ես, է, էք, են, էի, Լ, Լին, իցէ, իցէք ձևերը։ Ջուղա-
յի բարբառի ձևով են՝ ամ, աս, ա, անք, էք, ան, ի, Լ, Լին, ինք։ Գրաբարյան
Եմք, Լաք ձևերի դիմաց ունի նաև Եմք, Լինք ձևերը։ Եմք-ը արդեն գործածա-
կան էր միջին հայերենում, իսկ Լինք-ը՝ բարբառներում, նույնությունը անց-
նում են աշխարհաբարին։ Ներկա ժամանակի հոգնակի 1-ին դեմքի համար
գործածել է էք ձևը, որ նույնն է հոգնակի 2-րդ դեմքի հետ։ I և II դեմքերի
նույնությունը Աղուիսի բարբառի յուրահատկությունն է, սակայն այստեղ
բայն ունի ոչ թէ Աղուիսի բարբառի ք բարտահայտությունը, այլ Ջուղայի
բարբառի՝ էք։

Ժխտական խոնարհումից զրաբարյան են շեմ, շես, շէ, շեն, շէր, շէին՝ ձեւերը: Զուղայի բարբառի որոշ ձեւեր համընկնում են զրաբարի հետ՝ շեմ, շես, շեն, շէր, մյուս ձեւերը բարբառային են՝ շի (3-րդ դեմք), շենի, շի (1-ին դեմք): Ներկա ժամանակի եղակի 3-րդ դեմքերը նույնն են Զուղայի և Ագուլիսի բարբառներում: Հոգնակի 3-րդ դեմքը ունի նաև Ագուլիսի բարբառի ձեւով՝ շին:

Բայի և նրա խոնարհման համակարգի քննությունից երևում է, որ երկուսն էլ գոյություն ունեն բազմազան ձեւեր, որոնք բացահայտում են դրանց զրաբարի, միջին հայերենի, բարբառների ու աշխարհաբարի հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները: Լեզվական նույն երևույթը բազմազան ձեւերով արտահայտելը բնորոշ էր մեր լեզվի զարգացման վաղ աշխարհաբարի շրջանին, որի ուսումնասիրության արժեքավոր հուշարձաններից է Ագուլեցու «Օրագրությունը»: Ինչպես լեզվական այլ երևույթներում, բայի և նրա խոնարհման համակարգում ևս Ագուլեցին ձգտում է կայունության և միօրինակության:

ГЛАГОЛ И СИСТЕМА СПРЯЖЕНИЯ В «ДНЕВНИКЕ» ЗАКАРИИ АГУЛЕЦИ

В. О. КАЖЯН

(Резюме)

«Дневник» купца XVII в. Закарии Агулеци—один из наиболее ценных памятников раннего ашхарабара (новоармянского языка). В настоящей статье рассматриваются аналитические глаголы, причастные формы, наклонения, аналитические глагольные времена, образованные сочетанием будущего и совершенно-результативного причастий с глаголами լինել («становиться», «быть») и կալ («иметься»), каузативные глаголы, категория страдательного залога, отрицательные формы спряжения, императив (запретительное повелительное наклонение), иррегулярные глаголы, а также глаголы с неполной парадигмой. Несмотря на наличие разных форм, характерных для древнеармянского и среднеармянского языков, восточноармянского и западноармянского ашхарабара, а также для диалектов ветви ում («ум») и կ («к»), Закария Агулеци стремится к унификации системы спряжения.